ՄԵՐԻ ԱՐՄԵՆԻ ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ մագիստրանտ

ՏՏ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՏՏ ոլորտը աշխարհի ամենաարագ զարգացող ոլորտներից մեկն է: 21-րդ դարը նշանավորվում է ՏՏ միջավայրի զարգացմամբ և ՏՏ հասարակության ձևավորմամբ: Տեղեկատվական հասարակություն ասելով՝ կարելի է հասկանալ տեղեկատվական տեխնոլոգիաների մի նոր հասարակություն, որտեղ հասարակության բարեկեցությունը կախված է նոր տեղեկատվական գիտելիքների ձեռքբերումից և դրանց ճիշտ օգտագործումից[1]: Աշխարհում ձևավորվում է համաշխարհային տեղեկատվական հասարակություն, որը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ազգային տնտեսության մրցակցությունը կապված է ՏՏ ոլորտի զարգացման հետ: Այսպիսով՝ ինովացիոն դարաշրջանում, որում ապրում ենք, հաջող տնտեսական զարգացումը պայմանավորված է ՏՏ ոլորտի զարգացման հետ: Ներկայումս զարգացած և զարգացող երկրների մեծ մասում տեղի է ունենում ՏՏ հասարակության կայացում, իսկ դրանց արդյունավետ օգտագործումը դառնում է շատ արդիական:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր երկրի զարգացումը որոշվում է ՀՆԱ-ում ՏՏ-ի մասնաբաժնով: Հաշվի առնելով վերոնշյալ փաստը՝ կարևոր է ՏՏ արտադրության արդյունավետ կառավարումը: Համաշխարհային պատմությունը ցույց է տալիս, որ տնտեսական ինտեգրումը անդամ երկրներին կարող է շոշափելի օգուտներ տալ: Երկրները, որոնք չեն օգտագործում ինտեգրման ներուժը իրենց ռազմավարության շրջանակներում, չեն կարող երկար գոյատևել ներկայիս մրցակցային և գլոբալիզացման պայմաններում: Հարկ է նշել, որ ՀՀ-ը, ներգրավված լինելով ինտեգրացիոն գործընթացներին, կարող է օգտվել ընդհանուր որոշումներից, մասնակցել բոլոր նախագծերին, դրա հետ մեկտեղ ունենալ ընդհանուր պարտավորություններ: Ինտեգրման շրջանակներում հարկավոր է դիտարկել ինչպես ապագա ձեռքբերումները, այնպես էլ հնարավոր կորուստները: Ինչպես ցույց է տալիս փորձը, միավորվելով տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններին՝ զարգացող պետությունները կարող են հասնել ավելի մեծ տեմպերի և ավելի ճիշտ օգտագործել սեփական առավելությունները:

Սոցիալ-տնտեսական ընդհանուր տարածաշրջանի ստեղծումը առաջին հերթին կարող է նպաստել ՏՏ ոլորտի զարգացմանը, քանի որ այն այժմ հանդիսանում է հիմնարար ոլորտներից մեկը: Ոլորտը նպաստում է արտադրողականության բարձրացմանը: Հարկ է նշել, որ ՀՀ-ը զբաղեցնում է առաջատար դիրք տարածաշրջանում: ՏՏ-ն հսկայական ներդրումներ ունի ՀՀ-ի արդյունավետության բարելավման գործում, դրա հետ մեկտեղ դրանք ակտիվորեն խթանում են բիզնես գործընթացների զարգացմանը:

ՀՀ-ում ՏՏ ոլորտի ճիշտ ռազմավարության իրականացումը կօգնի նվազեցնել տնտեսական հումքի արտահանման մասնաբաժինը: Ռազմավարության համակարգված իրականացումը կնպաստի տեղեկատվական ապահովության անվտանգությանը, այդ թվում՝ ՏՏ ոլորտի սպառնալիքների կանխարգելմանը: Ինտեգրացիայի շրջանակներում ՏՏ ոլորտը կդրվի որակական նոր մակարդակի վրա՝ ապահովելով աճի բարձր տեմպեր: ՀՀ-ի ռազմավարական նպատակը այս փուլում հասարակության լիարժեք անդամ դառնալն է՝ դրա հետ մեկտեղ պահպանելով իր քաղաքական անկախությունը, ազգային ինքնուրույնությունը և մշակութային ավանդույթները: Տնտեսական ինտեգրումը տեղի է ունենում ինչպես ազգային տնտեսական, այնպես էլ ձեռնարկությունների, ընկերությունների և կազմակերպությունների մակարդակով[2]: Ինտեգրացիայի

[1] Арутюнян М. Л. Риски, обусловленные трансформацией социально-политического пространства в современном информационном обществе 2014г.

[2] Борисов А.Б. Большой экономический словарь 2009 г.

մասին խոսելիս կարևոր է դիտարկել ԵԱՏՄ-ն որպես համակարգ՝ հաշվի առնելով դրանում առկա անդամ երկրների ներքին տնտեսական և քաղաքական համակարգերը, անդամ երկրների փոխհարաբերությունները, տեխնոլոգիական հագեցվածությունն ու դինամիկան և անդամ երկրների ռազմավարական նպատակները: Այսպիսով՝ տնտեսական ինտեգրումը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական միտումներից մեկն է, և այն ավելի նշանակալից դարձավ վերջին տասնամյակում:

Ինտեգրումը ՀՀ-ին հնարավորություն կտա ավելի համակարգված համագործակցել Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ: ՀՀ-ի համար ՏՏ ոլորտի զարգացումը շատ կարևոր է, քանի որ այն թույլ կտա կատարել նշանակալից ներդրումներ: ՏՏ ոլորտի զարգացումը սոցիալական ոլորտում կհանգեցնի մի շարք բարեփոխումների: Ինտեգրացիայի շրջանակներում ՏՏ ոլորտը կդրվի որակական նոր մակարդակի վրա՝ ապահովելով աճի բարձր տեմպեր:

Հարկ է նշել, որ ինտեգրվող երկրները ունեն մի շարք տարբերություններ՝ մասնավորապես կառավարման և գործարարության համակարգերում: Միասնական ՏՏ դաշտի ստեղծումը ենթադրում է համակարգված բյուջետային և արտաբյուջետային ֆինանսական աղբյուրների, նյութական և գիտական ռեսուրսների, ինչպես նաև համապատասխան իրավական կարգավորումների ամբողջություն:

ՏՏ ոլորտի հետևողական ծրագրի իրականացումը կարող է բեկումնային զարգացում ապահովել: Ոլորտի զարգացման համալիր ծրագիրը կապահովի ոլորտի աճ և որակական նոր մակարդակի զարգացման հիմք կհանդիսանա: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է բացահայտել առկա խոչընդոտները, ձեռնարկել քայլեր դրանք հաղթահարելու համար:

Աղյուսակ 1

ՀՀ-ի ՏՏ ոլորտի հիմնական ցուցանիշները 2010-2015թթ.[1]

		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
ՀՀ	գործող ընկերությունների ընդհանուր քանակ	197	281	360	380	400	450
	կուտակային տարեկան աճ (%)	15.6	22.6	23	20	19	21
	ոլորտի շրջանառությունը (մլն. ԱՄՆ դոլար)	14.8	205.1	244	294	349.4	559.1

Ըստ վերջին կանխատեսումների՝ 2015թ. ՌԴ-ի շուկայի ծավալը կկազմի 15-16 մլրդ դոլար: Մինչդեռ, ըստ սեփական հաշվետվությունների, 10 տարի առաջ ՌԴ-ի ՏՏ շուկան 2005-ին հասել էր 12 մլրդ. դոլարի: Այս անհամապատասխանությունը բացատրվում է այն փաստով, որ ավելի վաղ զեկույցում չեն ներառվել վաճառքի որոշ սեգմենտներ՝ բջջային հեռախոսներ, սմարթֆոններ: Հետագայում այս սեգմենտները դարձան ՏՏ-ի մի մաս, ինչն էլ իր հերթին ազդեց ընդհանուր ծավալի վրա: 2013թ. ՌԴ-ի ՏՏ շուկան կազմել է մոտ 35 մլրդ. դոլար, իսկ 2014թ.՝ մոտ 29 մլրդ. դոլար:

ՏՏ ոլորտը Ղազախստանում վերջին տարիներին զգալի աճ է գրանցել: Ըստ վիճակագրական տվյալների՝ Ղազախստանի 2014թ. ՏՏ մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 3.9%: Ղազախստանը մոտ է գտնվում ՌԴ-ին, և թերևս այդ է պատճառը, որ ռուսական ՏՏ ընկերությունները նախատեսում են ընդլայնել իրենց ծրագրերը հարևան երկրների հետ:

Ինչ վերաբերում է Բելառուսին, ապա վերջին ժամանակներս Բելառուսը վաստակել է ՏՏ առաջատար երկրի համբավ: Վերջին 10 տարիների ընթացքում Բելառուսի ՏՏ ոլորտը բնութագրվում է կայուն աճի տեմպերով: Տարեկան աճի տեմպը միջինում կազմում է 35-40 %, մինչդեռ աշխարհում այն կազմում է 4-6%:

Աղյուսակ 1-ից պարզ է դառնում, որ 2015թ. Հայաստանում ՏՏ ոլորտում գործող ընկերությունների շրջանառությունը աճել է: Ընդհանուր առմամբ՝ 2010-2015թթ. ժամանակահատվածում ՏՏ ոլորտը տարեկան աճել է միջինը 20.1%: Ոլորտում գործում է գրեթե 450 ընկերություն: 2014թ. համեմատ՝ դրանց թիվը աճել է 12%-ով: Հարկ է նշել նաև, որ ընկերությունների զգալի մասը ձևավորվում են Գյումրիում և Վանաձորում: 2010-2015թթ. տարեկան մոտավորապես 30 ընկե-

[1] Աղյուսակը կազմվել է՝ http://www.mineconomy.am, վիճակագրական տվյալների հիման վրա:

ռություն է հիմնվում, մինչդեռ 90-ականներին ընդամենը՝ 5-6: 44 ընկերությունների տարեկան շրջանառությունը գերազանցում է 1 մլն դոլարը: Ընկերությունների մոտավորապես կեսն ունի 100 հազարից մինչև 1 մլն. դոլարի շրջանառություն:

ՀՀ-ում 2015թ. ՏՏ ոլորտը նշանավորվեց ֆինանսական կառուցվածքների ներդրմամբ, տեխնոլոգիական ձեռնարկությունների խթանմամբ, ոլորտի կարողությունների զարգացմամբ, արտադրողականության բարձրացմամբ, ինչպես նաև որակյալ մասնագետների պատրաստմամբ և վերապատրաստմամբ, վաճառքի ծավալների և օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանմամբ: ՀՀ-ի ՏՏ ոլորտի մրցակցային կարևոր առավելություններից մեկը ոլորտի աշխատուժն է: Ներդրողների համար գրավիչ է նաև մեր մասնագետների բարձր արտադրողականությունը և աշխատուժի մատչելիությունը: Հարկ է նշել, որ ՀՀ-ի անդամակցությունը ԵԱՏՄ-ին խթան կհանդիսանա ակտիվացնելու Ռուսաստանի ՏՏ ընկերությունների գործունեությունը ՀՀ-ում:

Ներկայումս հայաստանյան ՏՏ ոլորտը արտահանման մեծ ներուժ ունի, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել Հայաստանի տնտեսության աճին և զարգացմանը: ՏՏ ընկերությունները կարող են առաջարկել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող որակյալ արտադրանք ու ծառայություններ: Պետք չէ սակայն մոռանալ,որ ոլորտում առկա են խնդիրներ արտաքին շուկա դուրս գալու և ՏՏ ոլորտի համար մասնագետներ պատրաստելու հարցում: Այստեղ կարևորվում է կառավարության կողմից խրախուսման քաղաքականությունը և աջակցման ծրագրերի իրականացումը: Ինչպես յուրաքանչյուր ոլորտում, այնպես էլ ՏՏ-ում, զարգացման համար հատկանշական դեր են խաղում ներդրումները: Անդամ երկրների ինտեգրումը կարող է փոխշահավետ լինել և՛ ընկերությունների, և՛ պետության համար: Ընդ որում՝ հարկ է նշել, որ վերջին տարիների ընթացքում ԱՊՀ երկրներում ՏՏ ոլորտի ներդրումների աճ է նկատվել:

ՏՏ ոլորտում Հայաստանը տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ ունի հետևյալ մրցակցային առավելությունները[1]՝

- տեղեկատվության, ճարտարագիտության, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառում միջազգային չափանիշներին համապատասխան աշխատանքների իրականացման կարողություն,
- համագործակցության մեծ փորձ,
- տեխնիկական հմտություններով և օտար լեզվի իմացությամբ բարձրակարգ մասնագետների առկայություն,
- գործառնական ցածր ծախսեր և էժան աշխատուժ,
- ոլորտի կայուն զարգացում,
- ԲՈՒՀ-ական ծրագրեր ՏՏ ոլորտի շրջանակներում,
- միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ:

Կարևոր ենք համարում նշել, որ ՀՀ-ի անդամակցությունը Եվրասիական Միությանը դեռևս չի տվել էական ազդեցություն ՏՏ ոլորտում, սակայն, անշուշտ ընդհանուր սահմանի բացակայությունը ԵԱՏՄ երկրների հետ այս ոլորտում չունի էական ազդեցություն, իսկ ընդհանուր շուկայում ոլորտի համակարգված զարգացման պարագայում լայն հնարավորություններ է ստեղծվում այդ ոլորտում Հայաստանի առավելությունները և ներուժը էապես մեծացնելու ու կիրառելու համար:

[1] http://www.mineconomy.am/

ՏՏ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՄԵՐԻ ԱՐՄԵՆԻ ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ մագիստրանտ

Համառոտագիր

ՀՀ-ի ինտեգրումը Եվրասիական տնտեսական միությանը կարող է ապահովել ՏՏ ոլորտի զարգացման բարձր ներուժ: Ոլորտը տնտեսության ամենահաջող և արագ զարգացող ճյուղերից է, որն էլ իր հերթին նպաստում է երկրում տեխնոլոգիական նորարարության և արտադրողականության բարձրացմանը: Սույն հոդվածում քննարկվում են ԵՏՄ-ին ՀՀ ինտեգրման շրջանակներում ՏՏ ոլորտի զարգացման հեռանկարները:

Բանալի բառեր. *ինտեգրացիա, Եվրասիական տնտեսական միություն, ՏՏ ոլորտ, տեղեկատվական հասարակություն, մարտահրավերներ, համագործակցություն, ներուժ:*

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ИТ- СЕКТОРА В РАМКАХ ИНТЕГРАЦИИ

МЕРИ АРМЕНОВНА ГУБАСАРЯН
младший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА
магистрант Армянского государственного экономического университета

Аннотация

Интеграция Армении в Евразийский экономический союз может обеспечить высокий потенциал развития ИТ-сектора. Сектор является одной из наиболее успешных и динамично развивающихся отраслей экономики, что в свою очередь способствует повышению технологического инновационного потенциала и производительности в стране. В статье рассматриваются перспективы развития ИТ-сектора в рамках интеграции Армении в Евразийский экономический союз.

Ключевые слова: *интеграция, Евразийский экономический союз, ИТ-сектор, информационное общество, вызовы, сотрудничество, потенциал.*

IT SECTOR DEVELOPMENT PROSPECTS WITHIN THE INTEGRATION FRAMEWORK

MERI ARMEN GHUBASARYAN
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
Graduate Student, Armenian State University of Economics

Abstract

Integration of the Armenian economy into the Eurasian Economic Union could ensure a high potential for the development of the IT sector. The sector is the most successful and dynamically sectors of the sectors of the economy that in its turn contributes to technological innovation, and increase in productivity. This article discusses the development prospects of the IT sector upon accession to the EAEU within the framework of integration.

Keywords: *Integration, Eurasian Economic Union, IT sector, information society, challenges, cooperation, potential.*